բռնութեանց այլազգեաց և յանսովոր պահանջանաց նոցին, որոց վասն բազում անգամ դառն դանկատանօք գրեալ էր առ ազգային, եւ եաղուպ աղա անսացեալ բանից նորա, խոստացաւ 'ի դառնալ իւրում 'ի Կոստանդինուպոլիս, կացուցանել Պատրիարք Երուսաղէմի զԹէոդորոս Եպիսկոպոս, զորմէ կտակաւ պատուիրեալ էր Գրիգոր Շղթայակիր, և զՅակոբ առեալ ընդ իւր գնաց 'ի Թագաւորեալ քաղաքն, եւ կացոյց զնա անդ վերստին Պատրիարք (1752)։ Եւ 'ի նոյն աւուրս մատոյց գիր աղաչանաց առ Արքայ, յորում յայտ արար թէ ինքն կամօք իւրովք հրաժարեալ է 'ի Պատրիարքութենէ Երուսաղէմի, և թէ չունի երբէք իրաւունս այնուհետեւ մխել ձեռն յայն իշխանութիւն, և 'ի տեղի իւր ընտրեալ է ազգն զԹէոդորոս Եպիսկոպոս։ Գրեցաւ ըստ այնմ հրովարտակ, և հաստատեցաւ Պատրիարքութիւնն Երուսաղէմի 'ի վերայ նորա, ՌՃԾ (1752)։ Այլ նա ինքն եաղուպ աղա յետ բազում դործոց իւրոց 'ի նմին ամի դլխատեցաւ 'ի Կոստանդինուպոլիս հրամանաւ Արքայի, Յուլիս 9։

ԴԼՈՒԽ Թ.

Վէճ՝ Յունաց ընդ Լատինաց։ Տիրել Յունաց գերեզմանի Ս. Աստուածածնի և մեծի եկեղեցւոյն Բեթղեհեմի։ Զրկանք Հայոց և Նեղութիւնք վասն այնց ազգաց. և վերստին հաստատիլ իրաւանց Հայոց։

Ի ՀԱՍԱՆԻԼ Պատրիարքական Պէրաթին՝ Նստաւ Թէոդորոս Եպիսկոպոս Խորենացի յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի, և կացոյց Փոխանորդ իւր զՅովհաննէս Եպիսկոպոս յԵրուսաղէմ, եւ զՍամուէլ վարդապետ 'ի Կոստանդինուպոլիս, և իշխանաւորք ազգին առաքեցին առ նա կանոնական բանս, և ընկալեալ նորա զայն՝ յաւել և ինքն ինչ ինչ 'ի վերայ նորա, 'ի բարւոք կառավարութիւն Աթոռոյն, զոր լուեալ Յակոբայ Պատրիարքի և գլխաւորաց ազգին ուրախացան յոյժ, (այս կանոնական բանք՝ չհասին 'ի ձեռս մեր)։